ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » 2010թ. N.

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համապատասխան՝

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2011 թվականին առաջարկվող գույքի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ.

1) հողամասերն օգտագործման տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> հ.286 որոշմանը համապատասխան.
2) հողամասերը հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում մեկնարկային գինը որոշվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի <<Համաձայնություն տալու մասին>> հ.11-Ա որոշմամբ.
3) ինքնակամ կառույցների օգտագործման տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին>> հ.12-Ա որոշման, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> հ.912-Ն որոշմանը համապատասխան.
4) քանդման ենթակա վթարային բնակելի տների և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի սեպտեմբերի 23-ի <<Երևան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու և Երևանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին>> հ.23-Ա և <<Երևան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու և Երևանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին>> հ.24-Ա որոշումների,

ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի <<Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին>> հ.172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման եթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին>> հ.682 որոշումներին համապատասխան.

3. Սահմանել, որ.

1) 2011 թվականի ընթացքում Երևան քաղաքի սեփականություն համարվող օտարման ենթակա գույքի գնահատման, օտարման և օգտագործման տրամադրման ձևի ընտրության, աճուրդի և մրցույթի անցկացման, մեկնարկային գների պայմանների որոշման, գույքի օգտագործման և կառուցապատման վարձավճարների չափերի և պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> հ. 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրով.
2) Սույն ծրագրի մաս է կազմում նաև Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> հ. 55-Ն որոշամբ հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը.
3) Սույն ծրագրի իմաստով 2011 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի ցանկում ընդգրկված է համարվում 2010 թվականի ծրագրում չընդգրկված և մինչև սույն ծրագրի ընդունվելը և (կամ) ծրագրի գործողության ընթացքում Երևան համայնքի անվամբ գրանցված գույքը, այդ թվում՝ Երևան համայնքի սեփականությանն անցած անժառանգ գույքը, դրա բաժինը։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2010 թվականի

ՑԱՆԿ
Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2011 թվականին առաջարկվող

հ/հ	Անշարժ գույքի անվանումը	Հասցեն	Անշարժ գույքի ընդհանուր մակերեսը /քմ/
1	Նկուղային տարածք	Կիևյան 4շ 24 շինություն	79.9
2	Ոչ բնակ տարածք	Կոմիտաս 32 հ.57 տարածք	50.3
3	ոչ բնակելի տարածք	Նորաշեն 34շ. 121	40,0
4	ոչ բնակելի տարածք	16 թաղ. 34շ.	40
5	խորդանոց	Հալաբյան 49 16բն	37
6	խորդանոց	Շինարարների 28շ. 18	52.2
7	խորդանոց	Ֆուչիկի 1-ին նրբ. 3շ. 22բն	54.1
8	խորդանոց	Ֆուչիկի 1-ին նրբ. 3շ. 30բն	38.4
9	Ոչ բնակելի	Անդրանիկի փ 122շ բն 2ա	69.1
10	Ոչ բնակելի	Անդրանիկի փ 112շ 54 տարածք	267.2
11	Ոչ բնակելի	Իսակովի փ 44շ բն 61	73.9
12	տարածք	Աբովյան 32	51,9
13	նկուղ	Թումանյան 9ա	314
14	տարածք	Մաշտոցի 2	146.6
15	ոչ բնակ. տարածք	Տ. Մեծ 31ա	340.4
16	ոչ բնակ. տարածք	Տպագրիչներ 13	17.5 և 22.8 ընդհանուր
17	ոչ բնակ. տարածք	Հյուս. պող. Թիվ 6/2 ավտոկայանատեղի	9604.0
18	ոչ բնակ. տարածք	Վարդանանց 65 հասցեի մարզադաշտի տոմսարկղ	24.0
19	ոչ բնակ. տարածք	Վարդանանց 65 հասցեի մարզադաշտի կաթսայատուն	88.1
20	ոչ բնակ. տարածք	Վարդանանց 65 հասցեի Վ.Մարգսյանի անվան մարզադաշտ	5213.2
21	նկուղ	Հանրապետության 62 թիվ 49 մանկապարտեզ	26.7
22	նկուղ	Կողբացի 2ա թիվ 256 մանակապարտեզ	159.3
23	նկուղ	Թումանյան 35ա երաժշտական դպրոց	74.8

24	տարածք	Պռոշյան 1 շ. թիվ 33	35.7
25	ավտոտնակ	Այգեստան 9/21շ. թիվ 2	18.6
26	ոչ բնակելի տարածք	Նար-Դոսի 4շ. թիվ 18/1	28.3
27	տարածք	Խորենացի 25 շ. թիվ 92	18.7
28	շինություն	Նար-Դոսի 75 շ. թիվ 170	9
29	շինություն	Նար-Դոսի 75 շ. թիվ 171	9.5
30	շինություն	Չարենց 68 շ. թիվ 71	20.5
31	տարածք	Բաղրամյան 21 շ. թիվ 84	43
32	տարածք	Բաղրամյան 21 շ. թիվ 85	24.2
33	շինություն	Խորենացի 47/1 շ. թիվ 137	291.1
34	տարածք	Թումանյան 27/1 շ. թիվ 17	29
35	տարածք	Խանջյան 49 շ. թիվ 55	54.5
36	տարածք	Ս.Կապուտիկյան 2 թիվ 41 /Ջրաշատ 92/	18.1
37	շինություն	Արշակունյաց 6շ. թիվ 80	36.7
38	տարածք	Մաշտոցի 48շ. թիվ 78	7.5
39	շինություն	Տ.Մեծի 20շ. թիվ 19	8.6
40	տարածք	Բաղրամյան 21 շ. թիվ 83	24.2
41	շինություն	Քրիստափորի 9 շ. թիվ 57	38.5
42	ոչ բնակելի տարածք	Մաշտոցի 39/12 շ. թիվ 81	43
43	տարածք	Ղ.Փարպեցի 26 շ. թիվ 41	16.4
44	շինություն	Սայաթ-Նովա 37 շ. թիվ 64	39.9
45	շինություն	Տ.Մեծի 36շ. թիվ 229	42.6
46	ոչ բնակելի տարածք	Զաքյան 1 շ. թիվ 38	58.1
47	տարածք	Սարյան 18 շ. թիվ 50	9.8
48	մարզասրահ	Դավթաշեն 2-րդ թաղ. 47շ. հ.1 նկուղի տարածք	1136.9
49	ոչ բնակելի	Դավթաշեն 1-ին թաղ. 15շ. 3-րդ մուտք տարածք	16.8
50	նկուղ	Դավթաշեն 3-րդ թաղ.23/1 հ.6 վարչական շենքի նկուղի տարածք	247
51	Ոչ բնակելի տարածք	Տ.Մեծի 48	115
52	Շինություն-տարածք	Գ. Մահարի փող. 127/1, 89.6քմ	89.6
53	Կուլ. կենց. մասն.	Գ. Մահարի փող. 127/1, 89.6քմ	583.5
54	Ոչ բնակելի տարածք / ՍՕՏԲ/	Գ.Նժդեհի 15 շ, 48	268.6
55	ոչ բնակելի տարածք	Զ. Սարկավագի 121շ.	18.3
56	ոչ բնակելի տարածք	Մ. Մելիքյան 13 շ	21
57	ոչ բնակելի տարածք	Դրոյի 21 ա շ.1-ին հարկ	253.3
58	կիսանկուղ	Ազատության պող. 2շ,	67.4
59	նկուղ	Ազատության 12 շ	30.7
60	ոչ բնակելի	Վիլնյուսի 87 շ. /22/	12.46
61	ոչ բնակելի	Գյուլիքեխվյան 9 /4/	91.2
62	ոչ բնակելի	Շոպրոնի 8 նկուղ. հարկ	9.75
63	ոչ բնակելի	Ջրվեժ Բանավան 7շ.	37
64	տարածք	Նուբար. 9փ. 1շ 50 տ.	70.8

65	ոչ բնակ տարածք	Նուբար. 11փ.16շ	66.4
66	տարածք	Խանջյան 15	43
67	հասարակական	Տիգրանյան 38	42.3
68	հասարակական	Տիգրանյան 38	28.5
69	ոչ բնակելի տարածք	Պուշկինի փող. 40շ 130 տարածք	98.7
70	ոչ բնակ. տարածք	Տ. Մեծ 31բ շենք 95 շինություն	35.5
71	կիսանկուղային տարածք	Երևանցու /Լալայանց/ փող. 37շ. 27 տար	55.0
72	Դեկորատիվ ջրավազան	Երվանդ Քոչարի 6	1500.0

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2011 թվականի ծրագրի մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ։

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի՝ «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրում ներառված է նաև գույքի օտարման գործառույթների իրականացման կարգը, ինչը հնարավորություն է տալիս տարեկան գույքագրման արդյունքներից ելնելով հաստատելու հերթական 2011 թվականի գուքի օտարման ծրագիրը։

Երևանի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 22-ի հ. 148 որոշման ընդունումից հետո ընդլայնվել են գույքի օտարման հետ կապված առանձին հարցերի շրջանակը։ Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը, 52-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքի սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գուքի ցանկը սահմանելու մասին» հ. 604-Ն որոշման 4-րդ կետը մշակվել և առաջարկվում է շրջանառության մեջ դնել գույքի օտարման 2011 թվականի ծրագիր, որը նպատակաուղղված է Երևան համայնքի սոցիալ տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրների լուծմանը, ինչպես նաև գույքի օգտագործման արդյունավետության բարձրացմանը։

Ներկայացված որոշման նախագծով առաջարկվող գույքի օտարման ցանկը և ուղղությունները որոշված են ելնելով Երևանի քաղաքապետարանի գույքի օտարման 2010 թվականի ծրագրի իրականացման ընթացքից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**